DOI: 10.53548/0320-8117-2024.1-379

«ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՈՒՄ» ԳԻՏԱԺՈՂՈՎԸ

2023 թ. մարտի 29-30-ին ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտում տեղի ունեցավ «**Ոռոգման համակարգերը հայկական լեռնաշխարհում»** խորագրով երկօրյա գիտաժողովը, որը տարբեր կողմերից քննեց ջրօգտագործման մշակույթը՝ սկսած հնագույն ժամանակներից մինչև մեր օրեր: Բացման խոսքով հանդես եկավ ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանը՝ կարևորելով նմանատիպ գիտաժողովների շարունակականությունը և մեկ մշակույթի շուրջ մտքերի գեներացումը: ՀԱԻ գիտական ղեկավար Պավել Ավետիսյանը, բարձր գնահատելով գիտաժողովի գաղափարը, հատուկ ընդգծեց, որ այն ավելի կարևոր և ուշագրավ է դառնում, քանի որ, բացի ջրի ֆիզիկական ընկալումներից, քննության են առնվում նաև հազարամյակների ընթացքում մարդու մտքում տեղ գտած ջրի տարբեր ընկալումները:

Լիագումար նիստի ընթացքում (թվով՝ 5 զեկուցում) ազգագրագետ, պ.գ.թ. Սուրեն Հոբոսյանը ներկայացրեց **«Ոռոգման ջրի չափման հայոց ավանդական միավորները»**՝ մանրամասն քննության առնելով ջրի չափման մշակույթին առնչվող հիմնական ձևերը, օրինակ՝ *«բահ»* կամ *«բել», «ջրաղաց», «նավ», «գլուխ», «ոտ», «մի ձեռ»* ևն, որոնք պատմաազգագրական նյութ լինելուց զատ՝ շատ կարևոր են նաև տվյալ ժամանակաշրջանի մարդու ընկալումներն ըմբռնելու տեսանկյունից: Ս. Հոբոսյանը նշեց նաև, որ Արարատյան դաշտը երկրագործական մշակույթի ձևավորման կենտրոններից մեկն էր, որտեղ աշխարհագրական և կլիմայական բավական դժվարին պայմաններում ոռոգման համակարգը և ջրից օգտվելու եղանակները հասցվել էին կատարելության:

Կ.գ.թ. Ռոման Հովսեփյանի **«Նախապատմական ժամանակների Այսրկովկասում ոռոգվող և անջրդի երկրագործական համակարգերի շուրջ»** զեկուցումը Արագածի նախալեռների ոռոգման համակարգերի սկզբնավորման, դրանց հետագա զարգացումների և ուսումնասիրության կարևորության ու նշանակության մասին էր:

Հնագետ Բորիս Գասպարյանը ներկայացրեց իր գիտական խմբի (Ռոբերտո Դան, Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Ս. Նահապետյան, Դ. Առաքելյան, Ս. Աղայան, Պ. Վիտոլո, Օ. Գասպարո, Բ. Գասպարյան) **«Ջրային պաշարների համալիր կառավարումը Վանի թագավորության շրջանում (Հրազդան գետի միջին հոսանքի օրինակով)»** համահեղինակային աշխատանքը: Բանախոսն անդրադարձավ ուրարտական շրջանի ջրային ռեսուրսներին, դրանց կառավարմանը՝ արժևորելով տվյալ ժամանակաշրջանի գերզարգացած ոռոգման համակարգերն ու ջրամատակարարման սկզբունքները: Նա կարևորեց այն հանգամանքը, որ գյուղատնտեսական բնույթի կարիքներից բացի՝ Վանի տիրակալները և կառավարիչներն առանձնակի վերաբերմունք ունեին բուն բնակավայ-

ների տնտեսական ու կենցաղային ջրամատակարարումն ապահովելու խնդրի նկատմամբ՝ բերելով Վանի, Էրեբունու, Արգիշտիխինիլիի, Ռուսախինիլիի, Թեյշեբաինիի մոտակայքում կառուցված արհեստական ջրամբարների ու ջրանցքների օրինակները:

Պ.գ.թ. Արսեն Բոբոխյանի **««Ալալու երգերն» ու «Աստղիկի պատկերը». հին Վասպուրականի ոռոգովի երկրագործական կենսատարածքը»** միջգիտակարգային զեկուցումը նվիրված էր Վասպուրական գավառի ջրային պաշարների, ոռոգման համակարգերի և դրանցով ամբողջ գավառի ջրապահովման ու ջրօգտագործման հարցերին: Հնագետն անդրադարձ կատարեց նաև տվյալ շրջանի ջրային մշակույթին առնչվող հնագիտական կոթողներին և դրանց հետ կապված որոշ առասպելաբանական պատումների, որոնք պահպանվել են հայ միջնադարյան մատենագրության մեջ:

Բ.գ.թ. Տորք Դալալյանն **«Առասպելաբանական վիշապը և ոռոգման համակարգերի առաջացման առասպելույթը»** զեկուցման մեջ խոսեց հնագույն ժամանակների ջրանցքներին ու գետերին առնչվող՝ վիշապի մասին հյուսված հավատալիքների մասին՝ ընդգծելով դրանց կարևորությունը և պատշաճ ուսումնասիրության անհրաժեշտությունը: Տարբեր ժողովուրդների մեջ տարածված՝ վիշապի առասպելական պատկերացումների և իգականության հետ դրանց ունեցած անմիջական կապի մասին խոսելով՝ Տ. Դալալյանը զուգադրել էր բանահյուսությունը, առասպելաբանությունը, լեզվաբանությունը: Ուշագրավ էին այդ համատեքստում արված համեմատությունները հայերի և տարածաշրջանի մի շարք ազգերի (պարսիկների, չեչենների, ինգուշների ևն) մեջ կենցաղավարող հավատալիքների միջև:

Առաջին նիստի ընթացքում (որն ուներ **«Ոռոգման և ջրաբաշխական համակարգերը հնագույն ժամանակներից մինչև անտիկ շրջան»** խորագիրը) պ.գ.դ. Համլետ Պետրոսյանը ներկայացրեց իր խմբի՝ **«Արցախի Տիգրանակերտի ջրանցքը»** համահեղինակային զեկույցը: Բանախոսը նշեց, որ Արցախի Հանրապետության Ասկերանի շրջանում գտնվող Տիգրանակերտ մայրաքաղաքի հայտնի ջրանցքը պատմական Հայաստանի հիդրոտեխնիկական ամենախոշոր կառույցներից մեկն է համարվում: Լուսաբանելով դրա կառուցման ժամանակը, սկզբունքները և առանձնահատկությունները՝ նա կարևորեց Տիգրանակերտի ջրանցքի՝ ոռոգման այս համակարգի՝ հայկական ջրամատակարարման սկզբունքով կառուցված լինելը, որը նաև քաղաքի հայկականության ապացույցներից է:

Երկրորդ նիստը **(«Ազգագրական և բանահյուսական տվյալները ոռոգման համակարգերի վերաբերյալ»)** բացեց պ.գ.դ. Հակոբ Չոլաքյանը՝ «**Ոռոգման հնարավորությունները Քեսապի շրջանին մէջ»** զեկույցով: Հայագետը համապարփակ ներկայացրեց Քեսաբի ջրային պաշարների քանակը՝ հատուկ շեշտելով դրանց սակավությունը, անդրադարձավ թե՛ բնական, թե՛ կառուցված աղբյուրներին՝ մանրամասնելով դրանց հետ կապված գեղեցիկ ավանդազրույցներն ու սնահավատությունները: Խոսելով շրջանի տեղագրության ու ջրային

ռեսուրսների մասին՝ բանախոսը մանրամասնեց. «Քեսապը լեռնային շրջան մըն է: Այստեղ տեղումները առատ կ՛ըլլան, բայց անձրեւային եղանակէն ետք ջուրի հիմնական աղբիւրները կը մնան ոչ յորդաբուխ աղբիւրները, հորերը, ժայռային բնական գոգաւորութիւնները՝ *գագ*, եւ հին եղանակով շինուած ջրամբարները՝ *արընճ*, ուր անձրեւաջուրը կը հաւաքուէր»:

«Շիրակի ջրանցքի կառուցման նշանակությունը և դրա արտացոլումը բանահյուսության մեջ» հոդվածում բ.գ.թ. Հասմիկ Գալստյանն անդրադարձավ Շիրակի հայտնի ջրանցքի կառուցման նախադրյալներին: Մանրամասն ներկայացնելով ջրանցքի հետ կապված մի շարք ավանդազրույցներ և բանահյուսական այլ պատումներ՝ Հ. Գալստյանն ընդգծեց ժողովրդի՝ ջրանցքին տված մեծ կարևորությունը: Բանագետը խոսեց նաև ջրանցքի կառուցման՝ թե՛ ժամանակի մամուլի, թե՛ հայ նորագույն գրականության էջերում տեղ գտած գրական արձագանքների մասին: Նա նշեց նաև, որ ջրանցքի կառուցման հարցը առաջ էր քաշվել դեռևս 1893-ին, ապա՝ 1906-ին, սակայն ծրագիրը գործի դրվեց միայն 1922-ին:

«Ոռոգմանն առնչվող խնդիրների արտացոլումը Գարդմանի (Հյուսիսային Արցախ) հայերի բանահյուսության մեջ» թեմայով իր ելույթում բանագետ Գևորգ Գյուլումյանը խոսեց Գարդմանի ջրային պաշարների մասին, անդրադարձ կատարեց դրանց սակավության հետևանքով դարերի ընթացքում ձևավորված անձրևաբեր ծեսերին, հմայախոսություններին, սնահավատական զրույցներին: Բանախոսը ներկայացրեց Գարդմանի լեռնային ռելիեֆի պատճառով առաջացած ջրի պակասի և դժվարհասանելիության վերաբերյալ իր հավաքած դաշտային նյութերը, որոնք խիստ հետք են թողել տեղաբնիկների մտածողության, վարքի վրա և իրենց ցայտուն արձագանքը գտել ժողովրդական բանահյուսության մեջ:

Ազգագրագետ Ռաֆիկ Գաբրիելյանի՝ **«Դարավանդների ոռոգման համակարգը հայկական մշակույթում»** բանախոսությունը նվիրված էր Հայկական լեռնաշխարհի բարձրադիր վայրերում տեղակայված բնակավայրերին, դրանց ոռոգման, ջրամատակարարման խնդիրներին, նաև բնական լանդշաֆտների մշակութայնացման հարցերին: Նա անդրադարձավ այդ բնակավայրերի՝ հատկապես նման գոտիներում տեղակայվելու քաղաքական պատճառներին՝ բերելով Զեյթունի, Հաճնի, Գետաշենի և մի շարք այլ քաղաքների ու բնակավայրերի օրինակները:

Երրորդ նիստի (**«Ջրային պաշարների կառավարումը հնագույն ժամանակներից մինչև միջնադար»**) սկզբում **«Ջրամատակարարման համակարգը Շնող գետի ավազանում»** զեկուցմամբ հնագետ Անի Սարատիկյանը ներկայացրեց Լոռու մարզի Շնող գետի հարակից տարածքների ջրամատակարարման և ջրօգտագործման սկզբունքները, նշեց, որ ավազանի տարածքում է գտնվում միջնադարյան նշանավոր Կայծոն ամրոցը (X-XI դդ.), որտեղ էլ պահվում է այս տարածքի ջրաբաշխական համակարգի վերաբերյալ առաջին կարևոր վկայությունը: Նա այնուհետև հավելեց, որ Լոռու մարզի տարածքը

դարեր շարունակ եղել է ակտիվ տնտեսական շրջաններից մեկը, որի զարգացած այգեգործական գոտին հիմնականում ընդգրկել է Դեբեդի և այն սնող վտակների ավազանները:

Հնագետ Բորիս Գասպարյանը իր բանախոսության մեջ՝ **«Հայաստանի հին քարի դարի բնակչության կողմից ջրային ռեսուրսների օգտագործումը»,** ուշագրավ մանրամասներ հաղորդեց իր գիտական խմբի (Բ. Գասպարյան, Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Հ. Հայդոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան Ս. Նահապետյան, Ֆ. Գլաուբերման) կատարած աշխատանքների մասին: Զեկուցումը հին Հայաստանում ջրօգտագործման մշակույթի սկզբնավորման մասին էր: Բ. Գասպարյանը ներկայացրեց այդ մշակույթի զարգացման ընթացքն ու միտումները մինչև միջնադար: Որպես լավագույն օրինակներ բերեց «Հաղթանակ-3» բացօթյա կայանը (Դեբեդ գետի կիրճ), «Արենի-1» և «Արենի-2» (Արփա գետի հովիտ), «Դալարիկ-1» քարայրները (Մաստարա գետի կիրճ), «Նոր-Գեղի-1» կայանը (Հրազդան գետի կիրճ) ևն:

Քարի դարին հաջորդող ժամանակաշրջանին վերաբերում էր համահեղինակային (Ա. Պետրոսյան, Վ. Մելիքյան, Հ. Հայդոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան, Ս. Նահապետյան, Ս. Աղայան, Ռ. Դան, Բ. Գասպարյան)՝ **«Հայաստանի ջրային ռեսուրսների կառավարման առաջին վկայություններն ըստ հնագիտական տվյալների (նոր քարի դար - բրոնզի դար)»** զեկույցը: Պատմելով հազարամյակներ առաջ Հայկական լեռնաշխարհում կենցաղավարող ջրօգտագործման մշակույթի, դրա ձևերի, մոտեցումների մասին՝ բանախոսը գծապատկերներով ներկայացրեց տվյալ ժամանակաշրջանի ոռոգման համակարգերի կառուցվածքը, խողովակների պատրաստման ձևերը, ջրանցքների կառուցման նպատակով փորված լեռնային թունելները՝ ընդգծելով նաև դրանք՝ որպես պատմական արժեք վերականգնելու և պահպանելու անհրաժեշտությունը:

Հնագետ Համազասպ Աբրահամյանը **«Նախնական դիտողություններ Դվինի ջրամատակարարման մասին»** թեմայով համահեղինակային հոդվածում (համահեղինակներ՝Հ. Պետրոսյան, Հ. Աբրահամյան, Ռ. Հովսեփյան) անդրադարձավ պատմական Դվին մայրաքաղաքի ջրամատակարարման մշակույթին՝ նշելով դրա զարգացածությունն ու ժամանակին ունեցած առաջնակարգ դերը: Համազասպ Աբրահամյանը նշեց, որ Դվինի ոռոգման համակարգի որոշ հատվածներ, որոնք հիմա նկատելի են հնավայրից հյուսիս և արևելք, գործել են մինչև XX դ. 30-ական թվականները:

Չորրորդ նիստի սկզբում («**Վիմագրերը ոռոգման և ջրային պաշարների կառավարման վերաբերյալ»)** պ.գ.թ. Արսեն Հարությունյանը ***«Ջրանցքաշինությունը միջնադարյան Հայաստանում՝ ըստ վիմագիր աղբյուրների»*** զեկուցման մեջ ներկայացրեց միջնադարյան ջրանցքների կառուցման սխեմաները, մոտեցումները և առանձնահատկությունները՝ հիմնվելով վիմագիր արձանագրությունների վրա: Նա արձանագրեց, որ Վանի թագավորության սեպագրերի բովանդակության հիմքում կատարած գործն իբրև հիշատակ ավանդելն

էր, և այդ սովորույթը տարածում գտավ նաև քրիստոնեական գրավոր մշակույթում: Նա անդրադարձավ նաև մի շարք վիմագրերի, որոնք պարունակում են ջրօգտագործման հիշատակություններ:

Բորիս Գասպարյանի (համահեղինակներ՝ Ա. Գրիգորյան, Ա. Ադիգյոզալյան, Հ. Հայդոսյան, Ա. Պետրոսյան) **«Ջրային պաշարների կառավարումը միջնադարյան Հայաստանում՝ ըստ հնագիտական և վիմագիր արձանագրությունների»** բանախոսությունը վերաբերում էր միջնադարյան Հայաստանի ջրային պաշարների և դրանց արդյունավետ օգտագործման լուծումներին: Բանախոսը փաստական տվյալներով ցույց տվեց, թե դարերի ընթացքում ինչքան են նվազել մեր ջրային պաշարները:

Հուշարձանների պահպանության ՊՈԱԿ-ի աշխատակից Ավետիք Ղազարյանը **«Ոռոգման հիշատակումը Ավանի տաճարի 1219 թ. վիմագրում»** զեկուցման մեջ անդրադարձավ Ավանի տաճարի հյուսիսային ճակատին Իվանե Զաքարյանի՝ 1219 թ. թողած արձանագրությանը, որտեղ, ըստ հեղինակի, հիշատակություն կա ոռոգման մասին:

Գիտաժողովի վերջին՝ հինգերորդ նիստին **(«Ջրօգտագործման մշակույթի տարբեր հայեցակետերը»)** ազգագրագետներ պ.գ.թ. Լիլիթ Սիմոնյանի և պ.գ.թ. Կարեն Հովհաննիսյանի **«Ջրօգտագործումը, սրբավայրը և ծեսը հայոց մեջ (դասակարգման փորձ)»** համահեղինակային հոդվածում Լ. Սիմոնյանը, խոսելով ջրօգտագործման, մասնավորապես աղբյուրների և դրանց տրված ծիսական նշանակության մասին, անդրադարձավ կրոնագիտության մեջ հայտնի՝ «նվազագույն սրբավայրի» գաղափարին, ծառերից, թփերից կամ աղբյուրներից բաղկացած սրբավայրերին:

Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի աշխատակցուհի, բ.գ.թ. Կարինե Առաքելյանը, **«Ջրի և ոռոգման համակարգի գեղարվեստական պատկերը Միսաք Մեծարենցի լեզվով»** զեկուցման մեջ անդրադարձ կատարելով ջրօգտագործման մշակույթին և հանճարեղ քնարերգուի՝ Միսաք Մեծարենցի բանաստեղծական բառապաշարում «ջուր» բառի առկայությանն ու դրան տրված սիմվոլիկ նշանակությանը, նշեց, որ Մեծարենցը գործածել է *ջուր* արմատով կազմված բազմաթիվ բառեր, ինչպես՝ ջրանիվ, ջրանկար, ջրանույշ, ջրաշոգի, ջրարբք, ջրծաղիկ և այլն:

Բորիս Գասպարյանը ներկայացրեց նաև իր գիտական խմբի (Բ. Գասպարյան, Ա. Գրիգորյան, Ռ. Դան, Վ. Մելիքյան, Հ. Հայդոսյան, Ա. Ադիգյոզալյան, Դ. Առաքելյան, Կ. Բայրամյան, Ա. Անանյան, Ս. Նահապետյան, Ֆ. Գլաուբերման, Ա. Պետրոսյան) աշխատանքը՝ **«Նուռնուսի պատմածիսական լանդշաֆտի հազարամյակների գոյության ֆենոմենը»** վերնագրով, պատմեց Նուռնուս բնակավայրի հնագիտական հուշարձանների, դրանց կարևորության և ժամանակի ընթացքում կրած փոփոխություններին մասին: Նա ընդգծեց, որ առանձնակի հետաքրքրություն ունի գյուղից հարավ-արևմուտք ընկած՝ Հրազդան գետի կիրճի հատվածը, որը տեղացիներին հայտնի է «Նադիրի այգի» անունով: Այստեղ առկա հնագիտական մեծ համալիրը ներառում է XIII դ. միանավ

դահլիճը, Սուրբ Աստվածածին կիսավեր եկեղեցին, արևմտյան կողմից ուշ շրջանում կցված գավիթը և շրջակայքում գտնվող միջնադարյան գերեզմանոցը:

Վերջում ելույթ ունեցավ հնագետ Արման Նալբանդյանը **(«Նորահայտումներ Լոռեբերդ ամրոցի միջնադարյան բաղնիքների ջրօգտագործման համակարգերի վերաբերյալ»)**: Մանրամասն խոսելով ծովի մակերևույթից 1490 մ բարձրության վրա գտնվող Լոռեբերդի տարածքում ժամանակին գործած մեծ և փոքր բաղնիքների մասին՝ նա մասնավորապես նշեց դրանց ջրամատակարարման առանձնահատկություններն ու զարգացածությունը՝ ընդգծելով այդ բարձրության վրա ջրի նմանօրինակ կառավարման ու բաշխման կարևորությունը: Բանախոսը ներկայացրեց նաև բերդի տարածքում իր պեղումների ժամանակ հայտնաբերված գտածոները՝ ջրի ծորակները, խողովակաշարը, ծխամորճերը ևն:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ տնօրեն Արսեն Բոբոխյանն իր եզրափակիչ խոսքում հայտնեց, որ **«Ոռոգման համակարգերը Հայկական լեռնաշխարհում»** գիտաժողովի նյութերը կընդգրկվեն հոդվածների ժողովածուի մեջ և առաջիկայում կհրատարակվեն:

ԱՆԱՀԻՏ ԽԵՉՈՅԱՆ
khechoyan.anahit@mail.ru

ԳԵՎՈՐԳ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ
gyulumyan1910@mail.ru